

յոժարութեամբ տուր զողջոյնն : Հընազանդ լեր մեծագունից . ներեա փոքրագունից , զիրդ քո պահեա , ըզգրեանդ ընթերցիր , զընթերցեալն մի մոռանար . հոգ տար տան քում . լեր հեզ և խոնարհ , անպատճառ մի բարկանար , մի զոք արհամարհեր , զեզ կելեօք մի ծիծաղիր : Փոխ տուր , տես ում տացես . արդարութեան հետեւեալիր , մի ստէպ խրախճանս առնիցես , ննջելդ բաւականօրէն . զուխոս քո պահեա , լեր սակաւ արրիչ , պահեա զպարկեշտութիւն . վասն հայրենեացդ պատերազմեա . ժիր լեր և ոչ հեզդ : Խնդրեա զանմուլար խրատս , փախիր յանպարկեշտ կանանց . ամենեկն մի ստեր , բարեացն բարի ասա , մի լինիցիս չարսիս . զհամբաւդ մի կորուսաներ . ուղիղ դատեա , զճնոզս համբերութեամբ յաղթեա . մի լինիր երախտամոռաց . գնա 'ի ժողովն հըմտագունից , այսինքն 'ի ձերակոյտն . առ և տուր զխրատ : Բարկութիւնդ դադարեցո . ստացիր զառարկնութիւն . մի ինչ վայրապար հաւատասցես , մի ինչ անմոռութեամբ արտացես՝ յուսալով 'ի զօրութիւնդ . փախիր 'ի խաղալոյ վէգս , պարկեշտ խաղօք շատայիր : Բան զքեզ փոքրագոյնն մի քամահեր . օտար բարեաց մի ցանկար . սիրեա զկողակիցդ , գիտունս արա զօրդիսդ . նախ լեր դու 'ի ներքոյ օրինաց զօրս դու հաստատեցեր . 'ի մէջ ընթերաց լեր սակաւախոս . իրաւանց զհետ գնա , և յօժար սիրով սիրեա :

(Շարունակելէ) :

Մ Ե Մ Ա Պ Ա Տ Ի Ի Ժ Ո Ղ Ո Վ

(Շարունակութիւն , տես թիւ 8) :

Ոհ , ինչպէս խիստ է պատժուած շատ անգամ զարգացման և կրամոյ կրթութեաց թողնիլը : Այն տեղից է շատերի այս անընդ դիմակալ փոխարկութիւնը՝ փոփոխակի զգացմունքներում . այս կախումը այս ներգաշնակութիւններից (Stimmungen), որոնք ինչպէս մի նուագարանի՝ կապակցութիւն ունին եղանակի հետ , կամ քմահաճոյքներից⁽¹⁾ , որոնք լուսնի նման փոփոխւում են , և բոլորի հետ միասին ինքնաճանաչ զգացման գրգռիլը , որ աւանտեղ առիթ է գտնում իրան յանցաւոր , յետ ընկած և տարաբաղդ համարելու . կեանքի վրայ սիրտ չուներնալը , որով սիրտը ամեն բանից սարսափում է և իրա մէջ ոչ մի հնար չէ գտնում ընդ դիմակալելու : Շատ անգամ այս մասին է պակաս ինքնիշխանութեան բոլոր արարողական զօրութիւնը , որ մարդ սովոր է միայն իրա համար ապրելու և ոչ մի ժամանակ ուրիշի : « Իմ տարաբաղդութիւնըն էր , որ ուզում էի թէ՛ ամենքը ինձ սիրեն՝ առանց իմ միայն մի հատ անձը սիրելուն » . մի հոգի է խոտու վանել , որը անափառութիւնից և անդադար շրջաշրջող աշխարհային ցանկութիւնից թշուառ չարչարանքներ կրելուց յետոյ՝ կրկին իրան գտաւ , իրա մեծահոգակ ինչ :

Ո՛ր շատ փորձուած բժիշկ՝ մեր և այլ ժամանակի կանանց հոգեկան ցաւերի պատճառները՝ այժմեան ջերմաւ

(1) Այս բառը թարգմանուած է գերմ. (Laune) բառից , սա Լատիներէն (Luna) բառիցն է առաջացել , որ նշանակում է լուսին . ուրեմն իսկզբանէ լուսնի հետ է համեմատուել այս կարողութիւնը և նրանից էլ անուն ստացել :

սենեկում (Treibhaus) զարգացման հե-
տեւանքներն էր համարում, որոնք
շատ անգամ երեւում են արդէն ման-
կութեան հասակում, ինչպէս ջրերի
անդադար գրգռումը դրոշմաբան կեան-
քի անհոգութիւն, և հոգում մի բնու-
թեան համեմատ զարգացած՝ կրօնա-
կան կրթութեան սրահառութիւն ։
Դեռ մի խօսք էլ այս վերջինի վրայ ։

Արդ կրօնական ուսումը միայն
հասկացողութեանը և յիշողութեանն
է նայում, կամ ուրիշ խօսքով, միայն
բնական մարդու զընթացողութեանն
է սնունդ տալիս, սիրտը չէ կարող
սնդանալ և իրա մէջ ունենալ նոր
կեանք, որից ճշմարիտ ինչ է առա-
ջանում ։ Իսրայելացի զգացման կրօ-
նական շարժումը և առաջնութիւնը
ոչ այլ ինչ են, բայց թէ հետո գրգ-
ռելի երեւակացութեան նշաններ և
կարելի մի սառն սրտի էլ, որ լու-
գիտէ միայն որեւէ աշխարհային մտա-
ծողութիւնն էլ առատաձգաշտու-
թեան հետ ։

Այսպիսի երեւակայական կրօնա-
ւորութեան մի կատարելի սնունդ է
առաջնորդում շատ անգամ մեր ժա-
մանակին սեպհական և մանաւանդ
կանանց մանկութեան վերաբերելի
այն սուրբ պատմութիւնների գրա-
կանութիւնը, որոնցից մի քանիսը,
մինչեւ անգամ յօժարակամ կարգաց-
ուածները չեն կարողանում տալ մի
պարզ, ուրախ, հաւատին հաստատ
քրիստոնէութիւն և գործնական քը-
րիստոնէութիւնը՝ էլ աւելի քիչ է ու-
րում միտքը և խիղճը պաշտօնակա-
տարութեան համար և կեանքի մէջ
փորձում ։ Այս պատմութիւնները
լցնում են հոգին գրեթէ միշտ թոյլ
զգացմունքներով և անպիտան երե-
ւակացութիւններով և հրաժարում
պարզ, առողջարար սնունդից ։ Այժմ

մարդ կարգում էլ է մի այսպիսի գիրք
միայն զուրջատուութեան համար, շա-
հաշաւ է տեսնում և նմանապէս զար-
մանում է Դրէյտադի « կորուսեալ
ձեռագրին » (1) վրայ՝ առանց զգաց-
ողութիւն ունենալու թէ՛ ինչպէս այն-
անդ մի կնիքայ խորատուգեալ սիրտ
հաւատից ընկնում է նրանով, ինչ
իրա մարդում ուսումնական կրթու-
թեան բարձրութիւնն է ։

Այնպիսի և անարմատ կրօնակա-
նութիւն չէ կարողանում դիմանալ
հենց այն փորձութիւններին էլ, ու-
րոնք նոր հանդամանքները առաջ են
բերում՝ ծնողաց տանից դուրս գա-
լուց յետոյ ։ Վերջ է տեսնուել արդ-
եօք, որ աղջիկները, որոնց դուցէ ա-
ռաքեալի հետ էլ կարելի լինէր ա-
սել, Վանի երանի էր ձեզ դէպի Տէրը
ունեցած սիրոյ մէջ, և որոնք իրանց
վրայ յայտ էին դրի՝ անհաւատ մար-
թութիւն էլ, եթէ հետը կենսապէս կը
կապէին, կարճ ժամանակից յետոյ՝
ճանապարհ բերելու, նոյնպէս ան-
հաւատ են դառնիլ, ինչպէս նա (ան-
հաւատ մարդը) ։ Կամ երբ ուրիշ հան-
գամանքներով մանկութեան երեւա-
կայութիւնը (Idealismus) թարշամում
է բանի կամ նիւթի անողքելի իրա-
կանութեան (Realismus) վրայ և կորչում
է կեանքի շքեղութիւնը, ինչպէս սու-
վորաբար պատահում է, որ մի ան-
միտ թար անապատի նման դատարկ է-
ութեան զգացմունք՝ հոգում մէջն է
մտնում և դուրս հանում քրիստոնէ-
ութեան բոլոր խիստ հեղքածները,
որ հոգին մի այնպիսի թողութե՛ն են
թարկնի, որի պտուղը խաղաղութիւն
չէ ։ Այս չէ թագնում առաջ բնու-
թիւն ունեցողների մօտ, որովհետեւ
ժամանակը անշմարելի գրում է շատ

(1) Մի պատմութիւն է (Novelle) ։

մարդկանց երեւոյ՝ նրանց ունեցածի և չունեցածի, ուրախութեան և հոգացողութեան հասկանալի արտայայտութիւնը, և մենք երբեմն կարծես թէ, կարգում ենք այս պարզ գրուածքում, որոնցից սրտի խաղաղութիւնն է խօսում. « Իմ հոգին խաղաղ է գէպի ինձ օգնող Աստուծոյ, — նոյնպէս եւ ընդ հակառակը միւսներում՝ ներքին խռովութիւնը և յուզմունքը կեանքի մէջ ։

Բաւական է պատկերացնել մի մալրութեամբ ։ Ի՞նչպէս կարող է դարգացումը անել, որ այս ամենը չ'ընկնի ։ Որն է աւելի լուսնաւոր քան զայն նախապէս նպատակը ։ Արդեմ, արդէն ամեն տեղ բացասականը դրականին ցոյց տուաւ և ես կարող եմ սահմանափակել մի բանի բանով, ինչ որ առանձին հանգամանքների բոլոր անսպասելի սեպհականութեան համար՝ ընդհանուր նշանակութիւն ունի, և փառք Աստուծոյ, որ մեզանում էլ կայ և հորումս նիւթէ մի աւելի քաջալերիչ պատկերի ։

Վրէնից առաջ մարդ չպիտի մանկութեան կանխադրեց ժամանակը՝ շատ ուսանելով ծանրաբեռնի, այլ աւելի տեղի տայ մի մարմնական աղետ դարգացման, հեշտացնի ուսման ձեւը և շատ բան աւելի իրար ետեւից՝ քան թէ իրար հետ անցնիլ տայ. բայց յետոյ հոգեկան կրթութեան ժամանակը աւելի առաջ մղի գէպի խկապէս քարնանային հասակը, ուր միայն կարող է սեպհական զօրութիւնը և հակումը և մի պարզ հասկացողութիւն որին հակումն է ուղղուած, միազատ անձնանուիրութիւն և արդիւնալից զբաղմունք առաջ բերել ։ Առաջին հիմը դնող դասը կամ ուսումը ոչինչ չպիտի անի, բայց թէ՛ օգուտը ճանաչել և պահանջել տայ, ապա ընդ-

արձակել գիտեմտութեան և կարողանալու ջրմանը և նշանակած դասերին դարձնել սեպհական գույն միայն հմուտ խորհրդով առաջնորդուած ջանասիրութիւնը և կեդրոնացած զօրութիւն, և լիովին կրթել, ուր տաղանդներ կան ։ Բնապարտեալ տաղանդները, երաժշտութիւնումը և նկարչութիւնումն էլ՝ բաւականութիւն չեն տալիս ոչ իրանց և ոչ ուրիշներին ։

Օբաղմունքը պիտի որոշակի կարգադրուած լինի և չպիտի համարձակ լի մոտածել թէ՛ խանարհ սովորելու ժամանակը լրացու, ապա ժամանակ է ինքնակամութեան և վայելչութեան փափագի համեմատ ։ Ինչ որ Վեթիկէնին ասում է. « Խոնարհ ընդգում էի միշտ իմ հոգին ամենից ազատ », վերաբերում է այս աւելի հասունացած մանկութեան հասակի հանգամանքների նոյնպէս և գործքում կամադրաշուսթեան և կարգաւորութեան առաջ, ուր հոգին ամբողջութեան է ստանում՝ շատ զբաղմունքի անհանդստութիւնը և իմաստակութիւնները հեռի են մնում ։ Այո, հոգեկան գործունէութիւնը պիտի լինի մի մեծ վայելչութիւն, հոգու ճշմարիտ բաւականութեան այն անարգ տրիտութիւն, որ նրան ոչ թէ՛ ոչինչ չէ տալիս, այլ խլում էլ է նրանից ճաշակը և ձգտական զօրութիւնը ։ Այժմ, երբ գիտութեան տարրները սեպհական իլ են, աւելի ուրախութիւնը ուղղակի պիտի լինի ուսում աւարտողներ և գեռ ստացողներ ։ Բնութիւնը եւ արուեստը, սրտմութիւնը և գրականութիւնը պիտի բանան իրանց գանձերը՝ հոգին ազնուութեամբ եւ մեծութեամբ հարստացնելու, ազատ բարձրութիւններ ստանալու և հոգեկան հորիզոնը հեռացնելու համար ։ Ո՞ր և նոյն նը-

պատակի համար՝ կարող է առանձնապէս հարկաւոր լինել աւելի փոքր հասարակութիւններում՝ գիմնադարձ զարթուցումը (Gegenseitige Anregung):

Առաքելներու կարօտ չէ, թէ այսպիսի ուսման հետ հարկաւոր է ձեռագործութիւն և հոգեկան զբաղմունք, տնային գործերից մի մասի համար պատասխանատուութիւնը և նշանակեալ պարտաւորութիւնները անհրաժեշտ են, որպէս զի վարժելի փոքրի վրայ և սովորելի ամբողջի վրայ նայիր. և եթէ գործնական արիաքննութիւնը առաջ է քննացել, հոգեկան սնունդն էլ աւելի գոհութեամբ կը ծաշակուի: Հոգեկան ծաշակումը ունի իրա պահեցողութիւնը, ինչպէս մարմնականը. և երբեմն, մանաւանդ ընթերցանութեան ժամանակը, պատ պահելը մինչեւ անգամ շատ փրկարար է: Ի հարկէ առանձնացած և առանց հոգեկան շարժման՝ ժամերով ձեռագործութեամբ պարապելը, նմանապէս գծագրելը և նկարելը՝ շատ անգամ մտածողութեան ժողովում չէ, այլ աւելի ցրում: Երանով հոգին չէ լցւում: Այս տեղ է տեղը ընթերցասիրելու և ազատ բացատրելու այն գրքերը, որոնք սուրբ գիրքը աւելի խոր են հասկացնում, կրթութեան և գրականութեան պատմութիւնը, գերմանացւոց և արիշ ժողովուրդների բանաստեղծութիւնը: Եւ պիտի ոչ միայն զատ զատ վեր առնել, այլ ամեն տեղ երկարածիդ կապը գտնել և պինդ պահել: Սրանում կարող է լինել արդէն մի պողտուէտ վարժողութիւն մի լոճ կամ կարգացած քարոյի, ծառի և այլ տեսակ բաների միտքը յայտնելում կամ առաջի առնելում: Արովհետեւ միշտ բան սովորելու է գրականապէս կամ բացասականապէս ամեն բանից, ինչ

պէս գրքերից և զբուցատրութիւններից, նայնպէս և կեանքում տեսածներից: Ահա զութիւն կրեւը պիտի միշտ լինի ամենը հասկանալու համար, ինչ նկատողութեանն է ենթարկւում, ուրիշներին ծարպիկ ուշադրութիւն, հայեացքներին եւ գաղափարութիւնից հետեւ ելու համար, և օգուտը ծանաչելու, իրանից էլ հարցնելու համար:

Այս ձեւով կարելի է շատ բան արիաքննութեամբ և բաց մտքով ժառանգել և հոգեպէս ժողովել: Բայց այնու ամենայնիւ այս ժառանգութիւնը կասկածելի արժանաւորութիւն կ'ունենայ, եթէ մի երկպառակը հետը չկցուի. առաջինը՝ որ ամենը վերաբերում է մի հոգեկան կենդանի, ուր կազմում է սովորութեան համոզմունքների հատիկը և հիմունքը, ներքին կեանքի ամուր տեղը, որ տեղից աճուն ապահովութեամբ նրա բոլոր արտայայտութիւնները առաջանում և իշխում են: Կանանց հոգին՝ առանց տարաբաղդ լինելու և իրա արժանաւորութիւնը և պատիւը կորսնցնելու, կարող է շատ բանից զուրկ մնալ, միայն ոչ այն հոգեկան հայրենեաց զգայմունքից յաւիտենական ճշմարտութեան մէջ: Բայց երկրորդը՝ որ ոչ մի գանձ, ինչ և ինչպէս էլ որ հոգեպէս սեպհականաւ լինի, չհամարձակուի լինել, որի ժառանգութեան վրայ մտքը նայի սնապարձ հպարտութեամբ: Արովհետեւ ոչ որ միայն իրա համար չէ, ոչ որ ինքը իրա համար չէ ապրում: Ամեն գիտութեան տաղանդի վարժողութեան, հեշտ ձեռագործութեան և այլն կը վերաբերի, ինչ այս հին երգը ասում է. «Վովում եմ քեզ, որ ինձ կարողութիւն ես տալիս՝ իմ մերձակային օգնելու և ծառայելու» (1): Այս ամենը

(1) Արթւում այս երգը եկեղեցական է առ Առ.

միայն նրանով և այնչափ ճշմարիտ ար-
ժանաւորութիւն կ'ունենան իւրա-
քանչիւրի համար, քանի որ իւրաքան-
չիւրը գործ ածել կարող է: Այս պիտի
իրա ծնողների տունը կամ ուր Մոտ-
ուած կ'առաջնորդի նրանով զարգա-
րի և ոչ թէ կամենայ գործ ածել մի-
այն ինքնահաւան սրածայճների վրայ:

Ուղղակի այն հասակում, որի վրայ
խօսում ենք, կարող է մի զգաստ սիրտ
էլ անհանգիստ լինիլ այնպէս, որ կ'առ-
ուի. Այս բան չունիմ անելու՝ իմ զօ-
րութիւնը և իմ սէրը գործքով ցոյց
տալու համար. և որոնց համար բա-
ւական չէ, եթէ մարդ կամենար մը-
խիթարել Հիլէրին ասածով, թէ՛ ազ-
նիւ բնութիւնները՝ իրանցով են փո-
խարինւում կամ գտնւում. այս-
պէս ոչ միայն մի դաշտի շուշանի նը-
ման բացւելու, կամ նարդի նման
անուշահոտութեամբ աւելը լցնելու
համար: Այլ, ճշմարիտ կրթութիւնը
միշտ ունի մի քիչ հաւատ, որ ա-
ռանց գործող չէ՝ սիրոյ ազդեցութեւ:
Խոտուածային բանը ցոյց է տալիս
պարզապէս գործքի հարկաւորութիւնը
և այս «Միջբառներն ամեն ժամանակ
ձեզ մօտ ունիք», ունի մի ընդարձակ
նշանակութիւն: Այլ մի տեղ պակաս
չէ դիպումս՝ մի մասնակից լինող
սրտի ծառայութեան պատրաստու-
թիւնը ապացուցանելու և իրագոր-
ծելու՝ օգնելով, ազատելով: Բարի
զարգացման քրիստոնէական տարրերը
պարապօր. դութեամբ կարող են դառ-
նալ մի արտաքին անշարժ, անկեանք
բարեպաշտութիւն և մի հոգեկան
մեծարարութիւն: Լւելի ապահով
մեղմութիւն (Correctiv) չկայ այս տա-
րիներում նրան և ամեն տեսակ ան-

բաւականութեան հսկառակ, քան
թէ մի ինչ և իցէ պաշտօնին յարմար
գործք, քան թէ ուրիշներին ընդու-
նիլ և սէր տալ, և անձը աւելի ապա-
հով փորձ չունի, քան թէ նրանում,
ինչ որ ուրիշի համար է:

Նշական եսականութեանց յետ
դառնալը՝ կարող է սրանում և ամեն
բանում միայն այն ժամանակի դառ-
նալ մի հետզհետէ ուղղութիւն դէ-
պի ճշմարիտ ինքնիշխանութիւնը, երբ
ուղիղ կերպով վաղ այն մասին է հո-
գացւում, որ այն առաջինը, հոգե-
կան կեանքի մի ամուր կեդրոնը կազ-
մուի աստուածային ճշմարտութեան
մէջ: Հոգին և սիրտը պիտի արդէն
մի քիչ ճանաչած լինին և ժառանգած,
երբ երկներանգ բաղձանքը մուտք է
գործում աշխարհի մէջ: Վատարկ և
վնասակար զբօսանքները միմիայն ար-
գելելով՝ չի լինիլ: Վրայն եթէ հոգին
մի աւելի բարձր գեղեցիկութիւն է
սիրում և իրան լուսաւորում և ճա-
ռագայթում հոգեկան երկնքի միակ
արեգակից, այս աշխարհի լոյսերը խա-
ւարում են: Վրայն այս հասակին տալ
մի ազնիւ, հաւատարի ազատութիւն.
առանց ազատութեան ոչ մի անձնու-
կանութիւն չէ կարող կազմուիլ: Այլ
թէ հարկը, այլ Խոտուածային բանի
վրայ սրած և վարժած հայեաց-
քը՝ պիտի նրանց ասի, ընչից հեռա-
նալու և փախչելու է: Նաւորու-
թեան և յատկութեան ուժով ճընշ-
ւած ուղղութիւնները՝ յետին տա-
րիներում, երբ փանդակները (Schranke.
Barrière) վեր կ'ընկնին, էլ աւելի ան-
խափան դուրս կը պրծնին եւ ծանր
բեռ կը դառնան: Այսպէս է զար-
գացումը դէպի այն ազատութիւնը,
որ ճշմարտութիւնիցն է և որ միայն
կարող է իսկապէս անձնատուր լինիլ
այն ամենին, ինչ որ իրրեւ պաշտօն

առած ուղղւած. ահա՛ գերմաներէնը. «Auf
dass ich's brauche zum Lobe dein, zu Nutz und
dienst des Nächsten mein».

և կոչում ինձ վրայ է ընկել, որովհետեւ ինչպէս կարող եմ ինձ նուիրել, եթէ ես իմ տէրը չեմ: Միայն այս հիմունքով կը սովորւի չափի ամեն բարի յատկութիւնը. ամեն բան կարող եմ անել, բայց ամեն բան օգտաւէտ չէ, կը բխանայ լեզուի բնական որութիւնը, կը կատարւի անձնութեան թիւնը, կը զօրեղանայ կամաւորութիւնը կամքի զօրութեան վրայ. մի խօսքով կը կազմւի բնաւորութիւնը: Այդ սրան հետ համադրածա՞ծը հաստատելու համար, ոչ մի ժամանակ աւելի յարմարաւոր չէ, քան թէ այն որի վրայ խօսում ենք:

Այս նոյն աւետարանական ճառապարհն է, որի վրայ մանկութեան բնական ուրախ մտածողութիւնը փոխարկւում է ուրախութեան, բարի սրտին մի ապահով տոկոսներ բերող դրամագլխի՝ կեանքի փորձութիւնների և նրա հետ խոնջիւ միակերպութիւնների մէջ: Առաջ կեանքը այն ծառին նման է, որ տնկուած է զովորաբար և երբէք չցամաքող աղբիւրի մօտ և որի տերեւները չեն թաքցւում: Մի ուրախալի մտածողութիւն նման չէ արեւօք արեգակի ճառագայթին, ուր ամեն բան հասունանում է, ուր մարդ ամեն բան աւելի պայծառ, աւելի ակներեւ է տեսնում և իրան աւելի հեշտ պաշտպանում: Այդ բնական մեղքի սերմը չէ դադարում մեղանհանգստայնեւոյ և սրտի ուրախութիւնը և խաղաղութիւնը վրդովեւոյց. բայց այնու ամենայնիւ մի հաւատ, որ անպատճառ է Աստուծոյ անկորոյս Արդիութեանը, աւաւանում է վերտօնի վճատութեան աղջամղջից դէպի փրկարար լոյսը և քաջալերում հոգին՝ յանցածի վրայ խոր արխրելիս, եւ անդարձ կորուստի վրայ տրամելիս: Մի այսպէս աստուածային

սիրոյ մէջ վաղ ամրացած ոգի լինում է հեղ և խոնարհ սրտով, և յայտնապէս իմանում էլ է, թէ զոկանքը և ցաւը մարդուս էութեան պայմաններն են, և թէ չարչարանքը և ճախորդութիւնը՝ չափի լինին մեղ համար երկրային բազդից պակաս աստիճաններ՝ դէպ երկինք առաջնորդելու. որովհետեւ ամեն բան պիտի լինի նրանց օգտի համար, որոնք ի՞նչ են սիրում:

Ինչպէս հենց կանանց ոգիքը (Gemüther), որոնք այս կեանքում մի ուրիշ կեանք են ճանաչում, որի վրայ իշխանութի չունի երկրային տանջանքը և նրա վախճանը. մահը, շատ անգամ նրանով են ողորմութիւն գտնում, որ ամեն տեղ ներկայ իրողութեան մէջ որոնում են այս ժամանակաւորութեւ ժամանաւած աւելի բարձր կեանքի կապը, անային կեանքի փոքրիկ շրջանին մէջ՝ իրանց օրական գործը կատարում են երկնային մտածողութեւ լինում են համբերող վշտի, ուրախ յուսոյ մէջ: Սրանք են խաչի չորս կողմով բուսած և նրան փաթաթող վարդերը՝ կանանց մանկութեւ կրթութեան ամենահարկաւոր խնդիրն է՝ կարողանալ սրանց հոգ տանիլ:

Հետպում եմ աւարտել: Դամա նակի երկպառակութեան եւ ոստի պետութիւնների զօրացող իշխանութեան վրայ բողոքին՝ առանց մտածելու հեշտ համաձայնելու է, թէ՛ ուղեղակի այսպիսի ժամանակի համար՝ մեղ առաջարկուած է համարձակ գլուխ բարձրացնել և լաւ նշաններն էլ նկատել: Այս նշանները պակաս չեն և ամենից աւելի քաջալերելները համարում եմ ես կանանց սեռի քրիստոնէական ճանաչողութեան եւ մտածման հետ զհետէ անուրանալի աճումը: Այժմ իրաւունք ունենանք կանանց պահելու և պաշտպանելու

պաշտօնը տալու, նրանք մի բնական
ընթացք կը բռնեն, որովհետեւ քը-
րիստոնէութիւնը, երկրի ազը, աշ-
խարհի պահպանիչ զօրութիւնն է, ո-
րով և կանանց ստիպու առ սակաւ
անմիջապէս յայտնի կը լինի, թէ այն
օգնութիւնը, որը նրանք կարողա-
նում են տալ նորագոյն կեանքի բա-
ցասական ուղղութիւններէ գէժ
պատերազմումը, միայն ներքուստ,
նրանց գործակցութեան շրջանի կեն-
դրոնից կարող է լինել: Արդեօք այն
ընդունելութիւնը, որ օրինակի հա-
մար, Ուիկի և թիրշի ընտանեկան
կեանքի վրայ գրեթէ գտել են, ա-
պացոյց չէ՞ մի կողմանէ, որ այս տեղ
միտում է մի սպառնալի և ոչ աւելի
բաւականազատ ամրացած տեղ՝ վըճ-
ռելու. միւս կողմանէ մի յոյս: Այս
պիսի գրուածքները ազադակներ են
գէպի կանայքը, թէ մենք մեր յոյսը
ձեզ վրայ ենք դրել:

Այս, մի կենդանի յոյս կայ՝ այս
շատ երկարապատում ժամանակում
կանանց գէպի միութիւնը ձգտողու-
թեան խաղաղարար տարրին վրայ,
այս բնութեան իշխանութեամբ միշտ
աւելի յաջող անվախճան գեգերան-
քում կանանց տնային կեանքի զօրու-
թիւնները միատեղ պահելու վրայ,
որոնք շատ կարեւոր են մատաղ սերն-
դումն էլ բնաւորութեան զօրութիւնը
և հաւատարմութիւնը պինդ պահել
տալու համար: Կանայքը իրանց այս-
պէս խաղաղութեան առաքելութիւն
մեր հզօր զինակիցքն են այն պատե-
րազմում, որ տարվամբ լիացնում
է ժամանակը:

Կարող է մի Անտիգոնէ (1) այս խօս-

քերի մէջ՝ «Ատելու համար չեմ, այլ
սիրելու անյայտ» (Unbewusi) նրանց սե-
ռի խաղաղարար կաշումը արտայայ-
տել, թէ՛ արջափ աւելի խոր է ըմբռ-
նում՝ Վերմանացի կինը, քրիստոնէաց
կինը կեանքի այս խնդիրը: Որովհե-
տեւ հենց այս է, որ ցոյց են տալիս
ժամանակի նշանները, թէ դարձեալ
կանայքը երբեմն ուարդ կը ճանաչեն
եւ երբեմն խոր կը դգան, թէ կըլ-
թութեան բաշոր պէսպիսութիւնը՝
ոչ թէ գեգերելու և խանգարելու,
այլ պահպանելու և բարձրացնելու
զօրութիւն լինելու համար՝ պիտի մի
բանում արմատանայ, այն յաւիտենա-
կան փրկութեան սթամբոլ և զօրա-
ցող համոզմունքի մէջ, թէ Աստուած
պաշտութիւնը ամեն բանի օգտուէտ
է և խառնում է սոյս և ապագայ
կեանքը:

Այս ճառով՝ կամեցայ մի քանի
կողմերով հայեցողութիւն անել կա-
նանց իսկական զարգացման վրայ, որ
այս հիմունքով ընտանեկան կեանքին՝
ինչպէս հետեւա՛յք, նայնպէս և նախա-
դրութիւն է: Չէր կարելի մտադրու-
թիւն ունենալ՝ սրանցից մի որ և իցէ
կողմը դուրս բերել, բայց մեծութիւ-
նը և գեղեցիկութիւնը այն դասին կամ
սեռման առաջարկել, որ սեռին տըր-
ւած է նրա կրթութեան համար, եւ
որ կրթութեան բոլոր ճանապար-
հում՝ նրան ասում է. պահիր, փնջ ու-
նիս, որ ոչ ոք քու թագը քեզից չը
խլի (1):

տիկ արգիլել էր դիակը թաղել. իսկ Անտիգոնէն
քայրական սիրով վառուած՝ ոտի տակ գցեց այս ար-
գելումը: Թագաւորի առաջ բերած՝ և պատառ-
խանատուութեան ենթարկւած ժամանակը՝ ասում
է նա. ես (քեզ հետ) իմ եղբորը ասելու համար
չեմ, այլ սիրելու:

(1) Սոյն ճառս թարգմանողին յառաջագանք նա-
խորդ հրատարակչին սխալմամբ եւ ձգուած ըլլա-
լով, հարկադրեցանք հետագայ թուով հաստաւա-
կելու:

(1) Անտիգոնէն Սոփոկլէսի ամենաբնական ողոր-
գութեան տիպոսն է: Անտիգոնէի եղբայրը՝ իրա
հայրենի քաղաք, Թեբայի գէժ պատերազմումը
փր էր ընկած: Բաղաբի թագաւոր՝ Կրէօնը սաս-